Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1795-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 1 հավելվածի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Մարզպետն ունի երեք խորհրդական, երկու օգնական և 1 մամլո քարտուղար, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է մարզպետը: Մարզպետի խորհրդականներին և օգնականներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետը:».

2) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետով.

«17.1. Մարզպետարանի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացմանը քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով մարզպետի կողմից կարող են կազմավորվել մարզպետին կից հանրային ներկայացուցչական խորհրդակցական մարմիններ:».

3) որոշման N 2 հավելվածի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքում՝

ա. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը միացման ձևով վերակազմակերպել առողջապահության և սոցիալական ապահովության վարչության,

բ. հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունը միացման ձևով վերակազմակերպել աշխատակազմի քաղաքաշինության վարչության,

գ. տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը լուծարել,

դ. ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը վերանվանել ֆինանսների և գնումների գործընթացների վարչության,

ե. զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինը վերակազմավորման ձևով վերակազմակերպել միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության.

4) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների թիվը սահմանելու մասին» N 618-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

ՀՀ Սյունիքի մարզպետ	3	1	2	-

»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: